Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիա
Մոլեկուլային կենսաբանության
Ինստիտուտ

Национальная Академия Наук
Республики Армения
Институт Молекулярной
Биологии

N2465-261

01.10.2014թ

ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2 ծածկագրով ընթացակարգի
հնարավոր մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված համապատասխանաբար ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2-1-ից ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2-145 շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություններ:

Սույն հրավերի ծածկագիրն է՝ <ՄԿԻ-ՇՀԾՁԲ-11/2-14/12>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Հասրաթյան 7, 2-րդ հարկ, հաշվապահություն հասցեով, Նարինե Հայրապետյանին, մինչև 2014թ. Հոկտեմբերի 6-ի ժամը 11:00-ը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Հասրաթյան 7, 2-րդ հարկ, հաշվապահություն հասցեում, 2014թ. Հոկտեմբերի 6-ին՝ ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրեն Ա. Բոյաջյան

Կատարող՝ Ն.Հայրապետյան

Հեռ. 28-26-22

ՀՀ,0014 Երևան, Հասրաթյան, 7 «» Հեռ. 37410281626 «» Ֆաքս 37410282061 «» էլ.փոստ imb@sci.am
РА,0014 Ереван, Асратяна, 7 «» Тел. 37410281626 «» Факс 37410282061 «» Эл.почта imb@sci.am

ՄԿԻ-ՇՀԾՁԲ-11/2-**14/12** ծածկագրով
Շրջանակային համաձայնագրի հրավերի

ՀՀ ԳԱԱ ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎԻԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան **<< >> Հոկտեմբեր 2014թ.**

<<----------->> ընկերությունը, ի դեմս տնօրեն ----------ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար), մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ ՊՈԱԿ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Բոյաջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավիասպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը կատարվում է սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրի և վճարման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայություն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությունով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության կատարման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծաառայթայն արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին 10 աշխատանքային օրվա ընթացքում վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Ապրանքը պետք է մատակարարվի վաճառողի ուժերով և միջոցներով ք.Երևան, Հասրաթյան փողոց 7 հասցեում: Ապրանքի մատակարարումը կատարվում է Պայմանագրի կնքումից հետո 1 օրվա ընթացքում:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից __2___ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության _2__ օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _10_օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ---------- /----------/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իևրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով,

իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև **Նոյեմբերի 6-ը**՝ կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ> ՊՈԱԿ Հասցեն՝ Ք. Երևան, Հասրաթյան 7 Բանկը՝ ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ Զեյթուն մասնաճյուղ Հ/Հ 220305140422000 ՀՎՀՀ 00008732 _____ ¥ëïáñ³·ñáõÃÛáõÝ¤ Î©Î	_____ ¥ëïáñ³·ñáõÃÛáõÝ¤ Î©Î

Հավելված 1

2014թ. N _____

Մատուցվող ծառայության Գնման պայմանագիր

Մատակարարման ենթակա Ծառայությունների տեխնիկական բնութագրերը

Չափա-բաժնի համա-րը	Գնման առարկայի անվանումը	Չափ-ման մի-ավորը	2014թ. համար գնման ենթակա քանակը	Մի-ավորի գինը ՀՀ դրամով	Ընդհա-նուր արժեքը ՀՀ դրամով	Գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ հատկանիշներ
1	Ավիատոմս	հատ	1			**Էկոնոմ կարգ** **Մեկնում՝** 26/10/2014, Երևան-Մոսկվա (Շերեմետևո)S U 1861(ժամը 16:20): **Վերադարձը՝** 30/10/2014 Մոսկվա(Շերեմետևո) -Երևան SU 1862(ժամը 16:40):
2	Ավիատոմս	հատ	1			**Էկոնոմ կարգ** **Մեկնում՝** 19/10/2014 Թբիլիսի-Ստամբուլ, TK 381 (ժամը 08:25); 19/10/2014 Ստամբուլ-Անկարա, TK 7246 (ժամը 11:00) **Վերադարձ՝** 24/10/2014 Անկարա-Ստամբուլ, TK 2105 (ժամը 04:20); 24/10/2014 Ստամբուլ-Թբիլիսի, TK 384 (ժամը 07:05)

ԳՆՈՐԴ

<ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ> ՊՈԱԿ

Հասցեն՝ Ք. Երևան, Հասրաթյան 7

Բանկը՝ ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ

Զեյթուն մասնաճյուղ

Հ/Հ 220305140422000

ՀՎՀՀ 00008732

¥ëïáñ³·ñáõÃÛáõÝ¤

Î©Î

ՎԱՃԱՌՈՂ

¥ëïáñ³·ñáõÃÛáõÝ¤

Î©Î

Հավելված 2

2014թ. N _____

Մատուցվող ծառայության Գնման պայմանագիր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժնի համա-րը	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ	
		Հոկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Ավիատոմս	100%	**100%**
2	Ավիատոմս	100%	**100%**

ԳՆՈՐԴ

<ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ> ՊՈԱԿ
Հասցեն՝ Ք. Երևան, Հասրաթյան 7
Բանկը՝ ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Զեյթուն մասնաճյուղ
Հ/Հ 220305140422000
ՀՎՀՀ 00008732

¥ëïáñ³·ñáõÃÛáõÝ¤
Î©î

ՎԱՃԱՌՈՂ

¥ëïáñ³·ñáõÃÛáõÝ¤
Î©î

Հավելված 3

2014թ. N _____

Մատուցվող ծառայության Գնման պայմանագիր

Կատարող	**Պատվիրատու**
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե _____	հասցե _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____.

Պատվիրատուն՝ ի դեմս_____և կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ <<___>> ,_____ե 20 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N_____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ մատուցում) համապատասխանում են պայմանագրով (Համաձայնագրով) ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<___>> <<_____>> 20 թ–ից <<___>> <<_____>> 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

առայության մատուցման համառոտ նկարագիրը	Մատուցման ցուցանիշները	Մատուցման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար ՀՀ դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	**Ծառայությունը ընդունեց**
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն	ազգանուն
_____	_____
Կ.Տ	Կ.Տ